ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝

Տնօրեն՝ .....

«31» ..... 2021թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի
Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց,

V դասարան

Սուսաննա Արամի Ոսկանյան
դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

V դասարանում սովորում են 10 աշակերտ՝ 4 տղա, 6 աղջիկ: Բոլորն էլ աշխատասեր են, ընդունակ, ակտիվորեն մասնակցում են ուսումնական գործընթացին, պարտաճանաչ կատարում են բոլոր ուսուցիչների տրված հանձնարարությունները: Սիրում են մասնակցել հասարակական աշխատանքներին:

Դասարանում ձևավորված է դասարանական կոլեկտիվ, տիրում է առողջ մթնոլորտ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Համաճարակային պայմաններում անվտանգության պայմաններին և կանոններին ծանոթացում:

Ծանոթացնել իրենց իրավունքներին նպարտականություններին

Անկախության տոն

Ազատամարտի հերոսները: Արցախյան պատերազմ

Ուսուցչի տոն

Ստեղծագործում ենք աշնան թեմայով: Ճանաչողական էքսկուրսիա դեպի Լոռվա չնաշխարհիկ բնություն:

Բոլորս տարբեր ենք,բոլորս ապրում ենք միասին

Իմ տունը, Մեր ընտանիքը (զրույց)

Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը, մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը

Ձմեռնամուտ, ասմունք, ձեռագործ աշխատանքներ

<<Ամանորի հեքիաթը>>, խորհուրդը

Երկրորդ կիսամյակի աշխատանքների պլանավորում, հերթապահության կազմակերպում:

Հայոց բանակին նվիրված տոն, Ազատամարտի հերոսները:

<<Իրավունք և պարտականություն>> /դաս./ժամ:

.<<Հայրենիքը սկսվում է իմ տնից>>դաս/ժամ:

Դաս/ժամ՝ <<Պահպանենք բնությունը- պահպանենք կյանքը>>:

Դաս-ժամ՝ <<Օրվա ռեժիմը և առողջությունը>>:

Ինչ է ազնվությունը

<<Գարնանամուտ>> ասմունք, ստեղծագործում են աշակերտները

Դաս-միջոցառում կանանց, մայրիկների տոնին ընդառաջ

Ինչ են սովորեցնում մեզ Հ. Թումանյանի հեքիաթները

Դաս/ժամ՝ <<Օգնիր ընկերոջդ մեծահոգաբար>>:

Ապրիլմեկյան կատակներ, Ժպիտը մարդու կյանքում
Դասասենյակի կանաչապատում
Միջոցառում՝ << Մեր շրջապատի թռչունները>>/Թռչնի օր/:
Զատկի տոն
<<Ճանապարհորդություն արևավառ ծաղիկների աշխարհում>>դաս/շամ:
Դասասենյակի հիմնավոր մաքրում
Մայիսյան հաղթանակներ << Հայրենիքի՝ նահատակներ, խոնարհվում ենք ձեր առաջ>>:
Դասղեկի ժամ՝ <<Սիրելի գրքի էջերով>>
Ընթացիք առաջադիմության քննարկում
Երեխաների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, ամփոփում
Բացատրել աշակերտներին, թե ինչպես պետք է պահեն տանը, դպրոցում, փողոցում և այլ հասարակական միջավայրում
Կիսամյակի ամփոփում, ամառային աշխատանքների պլանավորում
Էքսկուրսիայի կազմակերպում՝ ուսումնադաստիարակչական և ճանաչողական նպատակով

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն

Աշակերտներին տալ հոգևոր ճիշտ դաստիարակություն՝ հեռու պահելով աղանդներից: Երեխաների մեջ սերմանել հետաքրքրություն և համակրանք ազգային-եկեղեցական տոների, տոնակատարությունների հանդեպ, ծանոթացնել տոների իմաստներին, բովանդակությանը, Հայաստանում դրանք նշելու ավանդույթներին, ձևերին: Անհրաժեշտ է պատկերացումներ տալ ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, տարբեր ծիսակատարությունների մասին:

Գեղագիտական դաստիարակություն

Երեխային պետք է սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնել գեղեցիկը, տարբերակել այն, որին նպաստում են էքսկուրսիաները, զբոսանքները: Փորձել աշակերտների օգնությամբ գեղեցիկ, ճաշակով կահավորել դասարանը՝ համապատասխանեցներով ժամանակի պահանջներին: Սեր առաջացնել գեղեցիկի հանդեպ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Երեխաների հետ անցկացնել զրույցներ հայ ժողովրդի պատմական անցյալի, հայերի տարած հաղթանակների , հայ հերոսների, հաղթական տոների մասին: Սեր արթնացնել հայրենիքի, ազգի և բանակի հանդեպ: Խոսել հայկական բանակի անպարտության, զինվորների քաջության, արիության և թշնամու հետ տարած բազմաթիվ կռիվներում ունեցած հաջողությունների մասին:

Ֆիզիկական դաստիարակություն

Այս դաստիարակության կարևորագույն խնդիրն է առողջության ամրապնդումը: Պետք հետևել աշակերտի նստելաձևին՝ կեցվածքի ճիշտ ձևավորման համար: Հաճախակի կատարվում են ֆիզկուլտդադարներ և ընդհանուր զարգացնող վարժություններ՝ նշելով դրանց ճիշտ կատարման կարևորության մասին: Սրան նպաստում են նաև ֆիզկուլտուրայի դասերը, որին աշակերտները մասնակցում են մեծ սիրով:

Աշխատանքային դաստիարակություն

Պետք է սեր առաջացնել աշխատանքի հանդեպ: Երեխային պետք է բացատրել, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, պետք է զրուցել աշխատանքի կարևորության, ինչպես նաև աշխատանքի միջոցով ստեղծվող կյանքի համար անհրաժեշտ բարիքների մասին, առանց որոնց հնարավոր չէ ապրել: Սովորեցնել ճիշտ օգտագործել անհրաժեշտ նյութերը և աշխատանքային գործիքները տեխնոլոգիայի դասերին: Սերմանել միմյանց օգնելու կարողություն և աշխատասիրություն:

Բնապահպանական դաստիարակություն

Պետք է խոսել բնության, շրջապատի մաքրության պահպանության անհրաժեշտության և կարևորության մասին: Ծանոթացնել բնապահպանական կանոններին, որին պետք է հետևի յուրաքանչյուր մարդ: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները: Կարելի է կազմակերպել ծառատունկ, թղթի թափոնների հավաքում:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Հաճախակի անցկացնել ծնողական ժողովներ, խոսել դպրոց-ընտանիք կապի անհրաժեշտության մասին:

Ծնողխորհրդի անդամների միջոցով հաճախակի անցկացնել այցելություններ երեխաների տները՝ ծանոթանալու նրանց սոցիալական պայմաններին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Ծանոթացում հակահամաճարակային կանոններին		դասղեկ

	Դասարանի ակտիվի ընտրություն Ծանոթություն նորեկ աշակերտի հետ Զրույց՝ նվիրված մեծ աստղագետ Վ.Համբարձումյանի		աշակերտներ
II	Դասարանում հերթապահության կազմում Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում Դասարանի սոցիալապես անապահով երեխաների ցուցակի կազմում		դասղեկ
III	Ստեղծել <<Կազմակերպական անկյուն>> պատի թերթ		դասղեկ, աշակերտներ
IV	Ճանաչողական էքսկուրսիա		դասղեկ, աշակերտներ
V	Զրույց անցկացնել այլ առարկաներ պարապող ուսուցիչների հետ		դասղեկ, ուսուցիչներ
VI	Օգնել երեխաներին արտադասարանական խմբակներում		դասղեկ
VII	Աշնանային արձակուրդների անցկացման պլանի կազմում		դասղեկ
VIII	Դասալսումների անցկացում նույն դասարանում պարապող		դասղեկ
IX	Զրույց <<Պահպանենք վարվեցողության կանոնները>>թեմայով		դասղեկ
X	Զրույց բնության, շրջապատի մաքրության պահպանության անհրաժեշտության և կարևորության մասին		դասղեկ
XI	Զրույց ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, ազգային-եկեղեցական տոների, տոնակատարությունների մասին		դասղեկ
XII	Դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում		դասղեկ
XIII	Դասասենյակի նախապատրաստումը Նոր տարվան		դասղեկ
XIV	Զրույց <<Հայրենիքը սկսվում է իմ տնից>> թեմայով		դասղեկ
XV	Դասասենյակի հիմնավոր մաքրում		դասղեկ, աշակերտներ
XVI	Զրույց<<Գազը վտանգավոր կարող է լինել, եթե չգիտես նրանից օգտվելու		դասղեկ

	կանոնները>> թեմայով		
XVII	Զրույց <<Հ.Թումանյանը՝ ամենայն հայոց բանաստեղծը>> թեմայով		դասղեկ
XVIII	Զրույց <<Օրվա ռեժիմը և առողջությունը>> թեմայով		դասղեկ
XIX	Երկրաշարժից պաշտպանվելու կանոնները		դասղեկ
XX	Զրույց<<Մայր իմ անուշ ու անգին>> թեմայով		դասղեկ, աշակերտներ

XXI	Զրույց<<Խնամքով օգտագործենք դասագրքերը>> թեմայով		դասղեկ
XXI I	Տեսադաս՝<<Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի>> թեմայով		դասղեկ
XXI II	Զրույց <<Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչու՞>> թեմայով		դասղեկ, աշակերտներ
XXI V	Էքսկուրսիա <<Իմ ծննդավայրը>> թեմայով		դասղեկ, աշակերտներ
XX V	Զրույց <<Վատ սովորություններ, ինչպես պայքարել դրանց դեմ>> թեմայով		դասղեկ
XX VI	Զրույց <<Սպորտը երեխայի կյանքում >> թեմայով		դասղեկ
XX VII	Զրույց՝ Ժամանակակից տրանսպորտ- վտանգի մեծ և անկանխատեսելի աղբյուր		դասղեկ
XX VIII	Տեսադաս՝ Մեր ազգային հերոսները		դասղեկ աշակերտներ
XXI X	Զրույց <<Հաղթանակների մայիս>> թեմայով		դասղեկ
XX X	Զրույց <<Ընդլայնենք երեխաների հետաքրքրությունների շրջանակը>> թեմայով		դասղեկ
XX XI	Այցելություն <<Սուրբ Մարիամ Աստվածամայր >> եկեղեցի		դասղեկ աշակերտներ
XX XII	Զրույց <<Ընկուրություն>>թեմայով		դասղեկ , աշակերտներ
XX XIII	Էքսկուրսիա՝<<Մեր շրջապատի բնության հրաշքները>>		դասղեկ, աշակերտներ
XX XIV	Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում		դասղեկ